ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.12.2018թ. թիվ 1808902249 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<10>> 01 2019թ. 17-13-185-19/17-13-45 ք.Երևան

ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության պետի պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով Ռաֆայել Օհանյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Ազատության պողոտայի 11Ա շենքի 112 բնակարանի բնակիչ Ռաֆայել Օհանյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.12.2018թ. թիվ 1808902249 որոշումը՝ նշելով, որ խախտումն իր կողմից կատարվել է վատ եղանակային պայմանների հետևանքով ցածր տեսանելիության պատճառով, այլ ոչ թե միտումնավոր:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

*<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը:***

<<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենքի պահանջներով պայմանավորված Հայաստանի Հանրապետության շահագործվող բոլոր արագաչափ սարքերը սահմանված ժամկետում և կարգով ստուգաչափված են:

*Ըստ արագաչափ սարքի տեխնիկական բնութագրի՝ այն փոխադրամիջոցը, որի արագությունը համարվում է չափված, պետք է առնվազն մասամբ գտնվի նկարի երեք քառորդում՝ ընթացքի ուղղությամբ (գնահատման գոտի): Գնահատման գոտում չպետք է լինի միևնույն ուղղությամբ շարժվող որևէ այլ փոխադրամիջոց՝ նույնիսկ մասամբ: **Հակառակ ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցները կարող են գտնվել գնահատման գոտում:***

*ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման 65-րդ կետի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ՝ հաշվի առնելով երթևեկության ինտենսիվությունն ու տրանսպորտային միջոցի և բեռի վիճակն ու առանձնահատկությունները, **ճանապարհային և օդերևութաբանական պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակն ու տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ:***

Ըստ նույն որոշման 68-րդ կետի՝ բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ դիմումատուի գործողություններում առկա է մեղքը, իսկ մեղքը դա անձի հոգեկան վերաբերմունքն է իր կատարած արարքին և դրան հաջորդող հետևանքին, որը կարող է դրսևորվել ինչպես **դիտավորությամբ**, այնպես էլ **անզգուշությամբ**, ինչի պարագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով որևէ նշանակություն չունի, թե կոնկրետ արարքը վարորդը կատարում է այն պատճառով, որ հստակ գիտակցում է, որ դա խախտում է և դիտավորությամբ կատարում, թե այն պատճառով, որ վարորդը գիտակցում է, որ այդ արարքը արգելված է օրենքով, սակայն ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրա հետևանքները վրա չեն հասնի և թե այն պատճառով, որ վարորդը չի գիտակցել իր գործողության հակաիրավական բնույթը, սակայն կարող էր և պարտավոր էր գիտակցել այն (ՎԻՎՕ՝ հոդված 11)՝ զանցակազմի սուբյեկտիվ կողմ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր **(դիտավորյալ կամ անզգույշ)** այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, հետևաբար ակնհայտ է, որ անկախ անձի կողմից մեղքի ձևի դրսևորումից (իրավախախտում թույլ տվող անձը) նշված օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված արարք կատարած անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Վերը նշված փաստերի վերլուծության արդյունքում դիմումատուի իրավախախտման կատարած լինելու փաստը կասկած չի հարուցում:

Այսպիսով՝ հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.12.2018թ. թիվ 1808902249 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ռաֆայել Օհանյանին:

Ն. Սարգսյան

Կատարող Դ. Բալաբանյան